Ամերիկայի Հայոց դիմել էին Տ. Տեղակալին. և նորին Ամենապատուութեան, նոյն յուլիսի 20-ին հ. տ., մակագրութեան համեմատ Սինոդը միջնորդութիւն էր յարուցել կառավարութեան առաջ)։

Սեպտ. 19. թ. 1949. Գրութեամբ յայտնուեց Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքական Տեղապահին, թէ տարօնեցի Յովսէփ Եղոյեանը Տփխիսում չէ գտնուել։

Սեպտ. 28. թ. 1952. Առաջադրուեց Շամախու առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսին բացատրելու, թէ ինչ հիմնական պատճառ է ունեցել չհաստատելու Արմէնիքենդի կաթուղիկոսական պատուիրակների ընտրութիւնը։

Սեպտ. 28. թ. 1953. Առաջադրուեց Թիֆլիզի Հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին յանձնարարել Նպաստամատոյց Յանձնաժողովին ուղարկել Սինոդին ի պահ 75 հազար ռուբլու կամ գումարը և կամ տոմսը՝ փոխած Սինոդի անունով։

ՔԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Սեպտեմբեր 2. թ. 590. Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի տարեցոյց մարտի 22-ի № 1850 յայտարարութիւնը Զանգեզուրի գաւառի Երիցաթումբ գիւղացի Բաղդասար Տէր Պետրոսեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել Բաղդասար Տէր Պետրոսեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Երիցաթումբ գիւղի ծխականների համար։

Սեպտեմբեր 5. թ. 598։ Սինոդը լսեց փաստաբան Գ. Տէր Խաչատրեանի անցեալ օգոստոսի 8-ի գրութիւնը, որով վերջինս խնդրում է աղատ համարել իրան Մ. Աթա-

ալ հաւատարմատարի պաշտօնից, որոշեց. ազատ համարել երդուեալ հաւատարմար պ. Տէր Թաշատրեանին, իւր խնդրի համաձայն. Սինոդի հաւատարմատարի պաշտօնից՝ այս սեպտեմբերի 1-ից, յանձնարարելով նորան վերադարձնել իւր հաւատարմագիրը և իւր ժամ եղած բոլոր գործերն ու թղթերը, որանք վերաբերեալ են Մ. Ամենին։

Սեպտեմբեր 7. թ. 602. Սինոդը լսեց Սաղիանու նոր վանահայր նշանակուած Տ. Ղուկաս վարդապետի անցեալ օգոստոսի 30-ի յայտարարութիւնը, որով խնդրում է ազատ համարել իրան Սաղիանու վանահայրութեան պաշտօնից և կարգել Մողնու Ս. Գէորգ վանքի վանահայր, որոշեց. յարգելով Ղուկաս վարդապետի խնդիրը և ի նկատ առնելով նորա ծերութիւնն ու հիւանդագին վիճակը, նաև այն, որ նա քանիցս Մողնու Ս. Գէորգ վանքում վարած լինելով վանահօր պաշտօն, կարող է աւելի օգտակար լինել այնտեղ, քան Սաղիանու վանքում, ուր նա երբէք չէ եղել՝ ուստի Ղուկաս վարդապետին կարգել Ս. Գէորգ վանքի վանահայր։ Այս մասին յայտնել իրան Ղուկաս վարդապետին, Շամախու առաջնորդին և Երևանի Փոխ-Թեմակալին։

Սեպտեմբեր 7. թ. 603. Սինոդը լսեց Նորին Ամենապատուութեան՝ Տ. Տեղակալի անցեալ օգոստոսի 27-ի № 1893 առաջադրութիւնը, որով յայտնում է, թէ Մայր Ամենի վիճակն Ռուբէն աբեղայ Մանասեանին, իւր խնդրի համեմատ արձակել է Տպարանի վարչութեան անդամութիւնից Ճեմարանի երդեցողութեան ուսուցիչ նշանակուելու պատճառով և նշանակել է նրա տեղ տպարանի վարչութեան անդամ Յակոբ սարկաւագ Յակոբեանին, որոշեց. պատուիրել Սինոդի դանձապահին այս սեպտեմբերի մէկից կարճել Ռուբէն աբեղայի Տպարանի անդամութեան պաշտօնի յաւելեալ ռոճիկը և այդ յաւելումը նոյն թուից վճարել Տպարանի վարչութեան նոր անդամ Յակոբ սարկաւագին։

Սեպտեմբեր 14. թ. 614. Սինոդը լսեց Երևանի կան-

սխատորիայի տարեւոյս յուլիսի 8-ի № 6127 յայտարարութիւնը Էջմիածնի գաւառի Ղազնաֆար գիւղացի Սրամ Տէր Դանիէլեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. որովհետեւ յիշեալ Տէր Դանիէլեանցի վկայականները չեն համապատասխանում ծխական կանոնադրութեան 59 յօդուածին, ուստի Երեւանի կոնսիստորիայի միջնորդութիւնը, նորան քահանայ ձեռնադրելու մասին, թողնել առանց հետեւանքի։

Սեպտեմբեր 14. թ. 615. Սինոդը լսեց Երեւանի կոնսիստորիայի տարեւոյս մարտի 12-ի № 1391 յայտարարութիւնը Կարսի վիճակի Հին-Թիքնիզ գիւղացի Սարգիս Պողոսեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երեւանի կոնսիստորիային ընդունել հոգեւոր կոչման մէջ Հին-Թիքնիզ գիւղի բնակիչ Սարգիս Պողոսեանին և առաջադրել Երեւանի Փոխ-Թեմակալին ձեռնադրել նորան քահանայ յիշեալ գիւղի համար։

Սեպտեմբեր 14. № 617. Սինոդը լսեց Մոզնու ս. Գէորգ վանքի վանահայր Ղուկաս վարդապետի անցեալ օգոստոսի 23-ի յայտարարութիւնը յիշեալ վանքի նորոգութիւնների մասին, որոշեց. պատուիրել Երեւանի Փոխ-Թեմակալին այս տարուայ Մոզնու ս. Գէորգայ ուխտի արդիւնքը անշուշտ գործադրել վանքի կարեւոր նորոգութիւններն անելու համար համաձայն վանահօր յայտարարութեան։

Սեպտեմբեր 16. թ. 625. Սինոդը լսեց Ղարաբաղի կոնսիստորիայի տարեւոյս մայիսի 23-ի № 1229 յայտարարութիւնը, որով ներկայացնում է ի գնութիւն Սինոդի կոնսիստորիայի 1910 թուականի մոլոր և ելից մատեանները, որոշեց. Ղարաբաղի կոնսիստորիայի նախահաշուից դուրս արած ծախքերն ընդունելի համարելով՝ նախազգուշացնել կոնսիստորիային, որ այսուհետև առանց Սինոդի թոյլտուութեան այդպիսի ծախքեր չարուեն։

Սեպտեմբեր 21 թ. 639. Սինոդը լսեց Երեւանի կոնսիստորիայի տարեւոյս մայիսի 27-ի № 3832 յայտարարութիւնը Նոր-Բայազիտի գաւառի Քեօլաղուան գիւղացի

Գալուստ Տէր Սահակեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Քեօլագռան գիւղի բնակիչ Գալուստ Տէր Սահակեանին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմական-ին ձեռնադրել նորան քահանայ յիշեալ գիւղի համար։

Սեպտեմբեր 23. թ. 643. Սինոդը լսեց Նորին Ամենապատուութեան Տ. Տեղակալի № 1944 մակագրութիւնը, որով յանձնում է Սինոդի շուտափոյթ տնօրէնութեանը Հոգևոր Գործերի Դեպարտամենտի Դիրեկտոր Խարուզինի սեպտեմբեր 19-ի հեռագիրը, որով նա յայտնում է, թէ արգելք չկայ Ամերիկայի և Եւրոպայի թեմերի մասնակցութեանը կաթուղիկոսական ընտրութիւններին և խնդրում է Տ. Տեղակալին բարեհաճել ուղարկել ծանուցագիր-հրովարտակները Կովկասի Փոխարքայի ձեռքով ըստ պատկանելեաց, որոշեց. ուղարկելով Եւրոպայի և Ամերիկայի Հայոց առաջնորդների անունով ծանուցողական հրովարտակներ ի Տէր հանգուցեալ Մատթէոս Բ. կաթուղիկոսի մահուան մասին և ընտրական կանոններից մի-մի օրինակ, հրաւիրել նոցա մասնակցելու, օրէնքի համաձայն, առաջիկայ կաթուղիկոսական ընտրութեան և ընտրել տալու նոյն նպատակով մի-մի աշխարհական պատգամաւոր ամեն մի թեմից։ Յիշեալ հրովարտակները ուղարկել Կովկասի Տ. Փոխարքայի ձեռքով, համաձայն Հոգևոր Գործոց Դեպարտամենտի վերատեսչի հեռագրի, որ է.

Սեպտեմբեր 19-ի № 02972. Էջմիածին. Ամենայն Հայոց կաթուղիկոսի Տեղակալին.

«Փոխարքային հաղորդուած է, որ Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի թեմերը իրաւունք ունին մասնակցելու ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութեանը. բարեհաճեցէք ուղարկել ծանուցողական-հրովարտակներ Փոխարքայի միջոցով։ Դեպարտամենտի Դիրեկտոր Խարուզին։

Սեպտեմբեր 30. թ. 963. Սինոդը լսեց Ներքին Գործոց Նախարարի № 6558 առաջադրութիւնը, որով յայտնում է, որ թոյլ է տալիս, համաձայն Ատրպատականի Հա-

յոց կանխատարիայի միջնորդութեան, ընդունել Հայաստանեայց եկեղեցու ծոցը Ատրպատականի վերաբնակիչ հրէայ Եանկել-Մովշա Ցէյտլինին, որոշեց. թոյլ տալ Ատրպատականի Հայոց կանխատարիային ընդունել Հայաստանեայց եկեղեցու ծոցը հրէայ Եանկել-Մովշա Ցէյտլինին, կատարելով, համաձայն Ներքին Գործոց Նախարարութեան առաջադրութեան, օրէնքի բոլոր պահանջները (Օրին, ժող. XI հատ. 1 մ. 7 յօդ. յաւել.) հրէաների մկրտութեան վերաբերեալ։

Սինոդը Սեպտեմբերի 27-ի № 2278 և 2279 գրութիւններով յայտնեց Եւրոպայի և Ամերիկայի Հայոց առաջնորդներին, թէ Ներքին Գործոց Նախարարութեան թոյլտուութեան համաձայն ուղարկում է նրանց անունով ծանուցողական հրովարտակ Կովկասի Փոխարքայի Դիւանատունը, նրանց հասցնելու համար, որով նրանք և թեմից մի աշխարհական պատգամաւոր հրաւիրուում են մասնակցելու առաջիկայ կաթուղիկոսական ընտրութեանը։

Ի հետևումն Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիայի անցեալ օգոստոսի 31-ի № 1372 յայտարարութեան, Սինոդը սեպտեմբերի 23-ի № 2258 գրութեամբ պատասխանում է յիշեալ Կոնսիստորիային, որ մեր դաւանութիւնը ընդունած ուղղափառներին և հրէաներին առհասարակ ծխական ժողովներում և մասնաւորապէս կաթուղիկոսական ընտրութեանը վերաբերեալ ժողովներում ընտրելու և ընտրուելու իրաւունք տալու խնդրում պէտք է առաջնորդուել՝ առաջին դէպքում ծխական կանոնադրութեան 2, 4, 5, 7, 9 և 10 յօդուածներով, իսկ երկրորդ դէպքում այս տարուայ ապրիլի 25-ի № 990 շրջաբերականով։